



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 42-Ա

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Արովյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի երկրորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Արովյան համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում լուծությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին.

2) Արովյան համայնքի տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին.

3) Արովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.

4) Արովյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին.

5) Արովյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին.

6) Արովյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը սահմանելու մասին.

7) Արովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0231 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

8) Արովյան քաղաքի Կոտայքի փողոցի 5-րդ նրբանցքի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

9) Արովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0302-0037 ծածկագրով հողամասի մի մասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

10) Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող 3.02 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.

11) Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող 4.00324 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և առանց մրցույթի վարձակալությամբ

տրամադրելու մասին.

12) Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին.

13) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

14) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 06-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին.

16) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 04-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

17) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐԹՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ձեռնպահ -4

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Դեմ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13

ք. Աբովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 43-Ն

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ,
ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ
ԼՈՒԻԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի, Արովյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Արովյան համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լուծությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանել՝

1) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100 մետր հեռավորության վրա՝ ժամը 22.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

2) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100-1000 մետր հեռավորության վրա՝ ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

3) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից 1000 մետր և ավելի հեռավորության վրա՝ ժամը 24.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Աբովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 44-Ն

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ)
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի, Արովյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) Արովյան համայնքի տարածքում կարող են տեղակայվել բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից նվազագույնը 1000 մետր հեռավորության վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 45-Ա

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 82-րդ հոդվածի 3-րդ մասի, Արովյան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 46-Ա

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ
ՈՒՂՂԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Արովյան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել Արովյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐԶՈՒՄՅԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵԶՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Արովյան



Հավելված
Արոմյան համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 13-ի
N 46-Ա որոշման

ԿԱՐԳ

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ
ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում են Արոմյան համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը:
 2. Համայնքի կամավոր խնդիրներն ուղղակիորեն պայմանավորված չեն համայնքային կյանքի բնականոն ընթացքի հետ: Դրանք կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
 3. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների չափը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 2%-ը:
 4. Այն դեպքում, երբ կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի կողմից սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:
 5. Որպես համայնքի կամավոր խնդիրներ սահմանվում են՝
 - 1) աջակցություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին.
 - 2) մասնակի փոխհատուցում բարձր առաջադիմություն ունեցող, անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի.
 - 3) աջակցություն ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին:
 6. Որպես համայնքի կամավոր այլ խնդիր ավագանու կողմից սահմանելու համար առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:
- Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
- Այն դեպքում, երբ կամավոր խնդիր սահմանելու առաջարկությունը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և

անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

7. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի սեփական լիազորություններն են՝

1) ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխան, սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով:

2) մշտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան, որոշում է կայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ:

3) սահմանված կարգով ընթացք է տալիս սույն կարգի 6-րդ կետով նախատեսված նախաձեռնություններին:

8. Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով սոցիալական աջակցությունը տրամադրվում է մինչև 50 000 (հիսուն հազար) դրամի չափով:

9. Բացառիկ դեպքերում՝ արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ պայմանավորված, հրատապ աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում, համայնքի սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա՝ մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, կարող է տրամադրվել մինչև 500 000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով աջակցություն:

10. Աղետների դեպքում՝ աղետների գնահատման հանձնաժողովի եզրակացության հիման վրա 10 000 000 (տասը միլիոն) և ավելի վնաս կրելու պարագայում կարող է տրամադրվել փոխհատուցում մինչև 1 000 000 (մեկ միլիոն) դրամ:

11. Դրամական աջակցություն ցուցաբերելու դեպքում գումարը տրամադրվում է անկանխիկ՝ համապատասխան բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

12. Սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել նաև ոչ դրամական ձևով:

13. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձը (ընտանիքը) սոցիալական աջակցությունից կարող է օգտվել մեկ անգամ:

14. Ուսման վարձի մասնակի փոխհատուցման ձևով սոցիալական աջակցություն տրամադրվում է պետական (նաև՝ պետության կողմից հավատարմագրված ոչ պետական) բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող, բարձր առաջադիմություն ունեցող, ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխանող, ուսանողներին:

15. Սոցիալական աջակցությունից չեն կարող օգտվել Աբովյան համայնքի բնակիչ չհանդիսացող քաղաքացիները, ինչպես նաև համայնքի ղեկավարը, ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավար պաշտոններում աշխատողները, ինչպես նաև վերջիններիս հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձիք (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 47-Ա

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի Արովյան համայնքի ավագանին **որոշում է՝**

- Սահմանել Արովյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Արովյան



Հավելված

Արդյան համայնքի ավագանու

2022 թվականի մայիսի 13-ի

№ 47-Ա որոշման

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Արովյան համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման հետ կապված հիմնադրույթները և կարգավորումները, մասնավորապես՝ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը և սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը:

II. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

- 1) համայնքի ավագանու մինչև չորս անդամ,
- 2) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից մինչև երկու անդամ,
- 3) սոցիալական աշխատողներ՝ մինչև երեք անդամ,
- 4) համայնքապետարանի աշխատակազմից մինչև երկու անդամ

4. Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնաձև համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության մինչև երեք ներկայացուցիչներ:
5. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:
6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարան:
7. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:
8. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:
9. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին:
11. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան:
12. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի, քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են խնդրի կարգավորման համար լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:
13. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

IV. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները,

2) համայնքում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

15. Դիմումը (**Ձև 2**) ներկայացվում է համայնքապետարան անձամբ կամ լիազորված անձի միջոցով (լիազորագիրը կցվում է դիմումին):

16. Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով:

17. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը

2) դիմումատուի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը.

3) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).

4) բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի տեղեկանքի և կենսաթոշակի վկայականի պատճենները (առկայության դեպքում).

5) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում).

6) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված Միասնական սոցիալական ծառայության կողմից (անհրաժեշտության դեպքում).

7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստաթղթերը (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս և այլ).

8) էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում կցվում են վերը նշված փաստաթղթերի սկանավորված հայերեն տարբերակները:

18. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները ըստ անհրաժեշտության պատճենահանում է,

դրանց վրա կատարում է գրառում բնօրինակների հետ համապատասխանության մասին և փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմումատուին:

Ըստ անհրաժեշտության վերցվում են փաստաթղթերի բնօրինակները:

19. Փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի համապատասխան աշխատակցի կողմից հանձնվում է սոցիալական աջակցության հարցերը քննարկող հանձնաժողովին:

V. ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Դիմումները կամ գրությունները ստանալուց հետո՝ մեկ շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

21. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք (անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տունայցի կատարում, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում):

22. Հանձնաժողովը իրականացնում է հետազոտություն (տնային այցելություն) և կազմում դիմումատուի սոցիալական կարիքների գնահատման ակտ:

23. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել դիմումատուն:

24. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ գրավոր մերժվում է սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:

25. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

26. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 օրվա ընթացքում:

VI. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

27. Տունայց կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:
28. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը (**Ձև 1**):
29. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել մի քանի այցելություն:
30. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):
31. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելու օրվանից եռօրյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:
32. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:
33. Քննարկման արդյունքում հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:
34. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու մասին որոշում կայացնելու համար:
35. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան դիմումն ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:
36. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

VII. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

37. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
- 2) միայնակ մայր - 1 միավոր,
- 3) խնամքին ամուսնալուծված անձի երեխա ունեցող ընտանիք - 1 միավոր,
- 4) բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք - 1 միավոր,
- 5) միակողմանի ծնողազուրկ կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք - 1 միավոր
- 6) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք - 2 միավոր յուրաքանչյուրին (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղբյուրի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 7) ընտանիքում 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, հաշմանդամություն ունեցող երեխա - 2 միավոր յուրաքանչյուրին (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 8) հղի կին - 1 միավոր
- 9) վարձով կամ ոչ հիմնական շինությունում, 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 10) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր (1միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 11) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 12) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 13) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

14) անբարենպաստ այլ պայմաններ – 1-ից 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

38. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում:

39. Սույն չափորոշիչների համար ընտանիք է համարվում միևնույն հասցեում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև միայնակ ապրող անձը:

VIII. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

40. Աջակցություն տրամադրելու ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում կամ գրություն.

2) դիմողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի և նրա անդամի(ների) սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.

4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

5) տան սեփականատեր չհանդիսանալու վերաբերյալ տեղեկանք՝ VX SOFT համակարգից.

6) հանձնաժողովի եզրակացությունը.

7) սոցիալական աշխատողի կամ գործը վարող համայնքային ծառայողի հատուկ եզրակացությունը՝ այդպիսին լինելու դեպքում.

8) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

9) ընտանիքին աջակցություն ցուցաբերելու մասին վճարման հանձնարարականը:

41. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

42. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքապետարանի աշխատակազմի կնիքով:

43. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև Էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արուսյան համայնք

«-----»-----202----թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի ազգանուն, անուն, հայրանուն -----

Հասցե -----

Հեռախոս -----

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

Ազգանուն, անուն, հայրանուն	Կարգավիճակ	Ծննդյան օր, ամիս, տարի

Ընտանիքի կարգավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով	

ապահովվածություն	
Եկամուտներ	
Հազուատով ապահովվածություն	
Սննդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

Լուսանկարների առկայություն



Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

N	Չափորոշիչը	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	նպաստառու ընտանիք	1	
2	միայնակ մայր	1	
3	ամուսնալուծված ընտանիք, որտեղ առկա է անչափահաս	1	
4	բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք	1	
5	միակողմանի ծնողազուրկ կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք	1	
6	պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր	2	
7	ընտանիքում 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, հաշմանդամություն ունեցող երեխա	2	
8	հղի կին	1	
9	վարձով կամ ոչ հիմնական շինությունում, 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք	2	

10	դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք	3	
11	դիմելու օրվան նախորդող վեց ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք	2	
12	հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք	2	
13	Միայնակ թոշակառու	2	
14	անբարենպաստ այլ պայմաններ	1-5	
ԸՆԴԱՄԵՆԸ			

Աշխատանքային խմբի անդամներ

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

Դիմումի ձև

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի
ղեկավար պարոն.....ին
Հասցե.....
..... բնակիչ
Անուն, ազգանուն.....
.....ից
Հեռախոս.....
Էլ. փոստ.....

ገ ሐ ሆ በሐ ሆ

Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Հանդիսանում եմ Աբովյան համայնքի բնակիչ: Գտնվում եմ սոցիալական ծանր պայմաններում:

[illegible]

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝

№	Փաստաթղթի անվանումը	Կցված է (կատարվում է✓ նշում)
1.	Դիմում՝ լրացված սահմանված ձևով	
2.	Անձը հավաստող փաստաթղթի պատճենը	
3.	Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը	
4.	Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին	
5.	Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննական որոշման պատճենը	
6.	Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք	
7.	Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից	
8.	Այլ	

Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

- ☐ էլեկտրոնային փոստի միջոցով
- ☐ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով
- ☐ պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(դիմումատուի անուն, ազգանուն)

----- 20-- թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 մայիսի 2022 թվականի N 48-Ա

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի, Արովյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել Արովյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Գ. ԳԱԼՍՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. մայիսի 13
ք. Արովյան



Հավելված

Արժվյան համայնի ավագանու

2022 թվականի մայիսի 13-ի

№ 48-Ա որոշման

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արժվյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի (այսուհետ՝ պաշտոնական կայք) վարման կարգը:
2. Պաշտոնական կայքի դոմենային անունն է *abovyan-kotayk.am*:
3. Պաշտոնական կայքը կառավարում է Արժվյանի համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ):
4. Պաշտոնական կայքի վարման համակարգող (ադմինիստրատոր) է հանդիսանում Աշխատակազմի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարիչը:
5. Պաշտոնական կայքում պարտադիր գրանցման են ենթակա օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերը, տեղեկությունները և նյութերը:
6. Համացանցում պաշտոնական կայքը հասանելի է օրվա մեջ 24 ժամ, շաբաթական 7 օր:

II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

7. Պաշտոնական կայքը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելու համար:
8. Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:
9. Պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հավաստի և ամբողջական:
10. Պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման պատասխանատու հանդես է գալիս սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժինը՝ Աշխատակազմի կանոնադրությանը համապատասխան: Պաշտոնական կայքում տեղեկատվության ապահովման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Աշխատակազմի քարտուղարը:

11. Պաշտոնական կայքում ներբեռնման հնարավորությամբ պետք է առկա լինեն՝

1) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը.

2) համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերը.

3) համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ծրագրի կատարողականը ու դրա վերաբերյալ հաշվետվությունները.

4) համայնքի բյուջեն, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները.

5) համայնքի գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքները.

6) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը.

7) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, բացառությամբ պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարման կամ օգտագործման տրամադրվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկի.

8) համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տրվող թույլտվությունների դիմումների ձևաթղթերը.

9) համայնքին վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական նախաձեռնությունների և նախագծերի, այդ թվում՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկատվությունը.

10) համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը.

11) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, ինչպես նաև սույն մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթղթերի վերաբերյալ անցկացված հանրային լսումների և քննարկումների արդյունքները.

12) համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և այլ կարգեր.

13) համայնքային խնդիրների վերաբերյալ համապատասխան քաղաքացիական նախաձեռնության մասին տեղեկացումը.

14) համայնքի ավագանու սահմանած այլ տեղեկատվություն:

15) համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում).

16) համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները.

17) համայնքում պետական և համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը.

18) համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը.

19) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ-գործընկերների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ՝ դասակարգված ըստ սոցիալական պաշտպանության, առողջապահական, կրթական, շրջակա միջավայրի պաշտպանության ու տնտեսական զարգացման ոլորտների.

20) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող ընթացիկ ու ավարտված նախագծերի ցուցասրահը (պորտֆոլիոն)՝ դրանց կողմից ապահովվող սոցիալական, բնապահպանական, առողջապահական, տնտեսական ու այլ ազդեցությունների հիմնավորմամբ, ինովացիոն գործոնի նկարագրությամբ.

21) համայնքի տուրիստական պրոֆիլը և ենթակառուցվածքների (տրանսպորտ, քարտեզներ, հանրային ծառայություններ, հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության առկա լուծումներ, եղանակային ռիսկեր, բնակարանային շուկա, զվարճության ոլորտի օբյեկտներ և այլն) մասին ամբողջական տեղեկությունները:

12. Պաշտոնական կայքում կարող է տեղադրվել՝

- 1) համայնքի պատմությունը,
- 2) Աշխատակազմի ընթացիկ գործունեության մասին տեղեկատվությունը,
- 3) Աշխատակազմի կառուցվածքը (հաստիքացուցակ, աշխատակիցների ցուցակ, աշխատակիցների կոնտակտային տվյալներ) և գրաֆիկական պատկերը,
- 4) Աշխատակազմի հիմնական խնդիրներն ու գործառույթները,
- 5) կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները,
- 6) այն նորմատիվ ակտերը կամ դրանց հղումները, որոնցով կարգավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը.
- 7) տեղեկություններ իրականացվող/իրականացված ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ).
- 8) Աշխատակազմում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվություն.
- 9) համայնքի ղեկավարի, ավագանու ուղերձները, ավագանու կանոնակարգը.
- 10) Աշխատակազմի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, գեկույցներ և այլ տեղեկատվություն.
- 11) թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին.
- 12) պաշտոնական միջոցառումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են Աշխատակազմի կողմից (ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցություններ և այլն),
- 13) համայնքի, Աշխատակազմի մասին ՀԼՄ-ներում հրապարակումները կամ դրանց հղումները.

14) Աշխատակազմին կամ դրա պաշտոնատար անձանց տրված մրցանակներն ու շնորհակալագրերը.

15) համայնքի ղեկավարի, ավագանու անդամների անունները, ազգանունները, կենսագրությունը, կոնտակտային տվյալները.

16) տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

17) Աշխատակազմի կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում առցանց), ընթացակարգերի նկարագրությունը, դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները.

18) հղումներ պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Կոտայքի մարզպետարանի և, առկայության դեպքում, նաև համայնքային ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին.

19) Աշխատակազմի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հասցեի քարտեզային պատկերը, հեռախոսահամարները.

20) համայնքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն.

21) համայնքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը.

22) գնումների մասին հայտարարությունները.

23) համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը.

24) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը (համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուները, ընտրատեղամասերը, ընտրացուցակները, ընտրությունների արդյունքները և այլն).

25) ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակներ.

26) տեսաձայնային նյութեր և նկարներ.

27) առցանց հարցումներ:

13. Սույն կարգի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկությունները պաշտոնական կայքում չեն հրապարակվում, եթե դրանք՝

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.

4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

14. Չի թույլատրվում պաշտոնական կայքում տեղադրել գովազդային բնույթի տեղեկատվություն՝ բացառությամբ սոցիալական գովազդի:

15. Բացի սույն կարգի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկություններից՝ պաշտոնական կայքում կարող է տեղադրվել նաև այլ լրացուցիչ տեղեկություն:

16. Պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվությունը հրապարակվում է պարտադիր հայերենով, իսկ ռուսերենով, անգլերենով և այլ լեզուներով՝ ըստ հնարավորության:

Պաշտոնական կայքում այլ լեզուներով առկա տեղեկատվությունը պետք է համապատասխանի հայերենով ներկայացված տարբերակին:

17. Պաշտոնական կայքում տեղադրված նյութերը պետք է պարունակեն հղումներ տեղեկատվության աղբյուրներին, հակառակ դեպքում դրանք կհամարվեն տվյալ մարմնի պաշտոնական տեղեկատվություն:

III. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Պաշտոնական կայքի գործունեության կազմակերպմանը մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝

